Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Մկրտիչ Արմեն

Եվրոպացին

1

Ալավերդու պղնձաձուլարանի ծխնելույզն առավոտվա բացվող լույսի մեջ սկսում է երևալ և ավելի որոշակի: Էլեկտրական լամպերն սկսում են դժգունանալ:

Լույսը բացվում է:

Դեբեդը խշշալով անցնում է և էլի գալիս և խշշալով անցնում է: Ծառերը, որ թեքված են նրա ջրի վրա, դանդաղ օրորվում են և նրանց օրորվող պատկերը բեկբեկվում է հոսող ջրի կոհակների մեջ:

Ձորում զովություն է: Անտառապատ լանջերը ձգվում են երկար և ոլորապտույտ: Կարող ես շրջանցել առաջին ոլորը՝ կհանդիպի երկրորդը, կշրջանցես երկրորդը՝ կհանդիպի երրորդը, չորրորդը, քսաներորդը, բայց ձորը դեռ դուրս չի գա ընդարձակ դաշտ: Հեռու է դաշտը և երկար է ձորն իր անտառապատ լանջերով ու Դեբեդով:

Ձորում զովություն է և բացվող առավոտը:

Ձուլարանի պահակը ծեր է: Նա հորանջում է: Իրենից անկախ՝ նրա ձեռքը բարձրանում է՝ խաչակնքելու համար: Բայց շարժումն ընդհատվում է դեռ ճակատի վրա: Պահակը քորում է ճակատը և վար է իջնում ձեռքը:

Բանվորական բնակարանային շենքի մի լուսամուտից մի մարդ դուրս է հանում գլուխը: Նա ճմռում է քնկոտ աչքերը և նրա գլուխը նորից ներս է ծծվում սենյակի մթության մեջ: Մի ուրիշ գլուխ դուրս է կախվում մի ուրիշ լուսամուտից և երևում են թևերը, որ ժիլետն են հագնում: Երկրորդ հարկի լուսամուտներից մեկի ետևում կանգնել է մեկը և սրբիչով երեսն է չորացնում:

Չխկում է մի դուռ: Դռնից դուրս է գալիս Եվրոպացին և քայլում է դեպի գետը: Նա ուսի սրբիչն ու սապոնը դնում է մի կողմ, պպզում է, երկու ձեռքով վերցնում է մի քիչ Դեբեդ և լվացվում է:

Եվրոպացին այդպես է սիրում լվացվել: Ձուլարանի բոլոր բանվորներին ծանոթ է նրա սովորությունը:

— Ես,— ասում է Եվրոպացին,— այնտեղ այնքան եմ լվացվել նեղ փողոցի աղքատիկ տան ժանգոտ լվացարանի ջրով, որ ձանձրացել եմ: Ինչպե՞ս կարելի է դա համեմատել Դեբեդի հետ, այս բացվող առավոտվա, այս խշշացող ծառերի. . .

Նա սրբիչով մաքրում-չորացնում է դեմքը և դեռ չի գնում: Նա սպասում է: Մի րոպե հետո ուժեղ սուլոց է լսվում, և ձորի վերջին ոլորի ետևից հայտնվելով, ձուլարանին է մոտենում, կանգնում է մի պահ և նորից գնում է գնացքը: Նա անցնում է առաջին ոլորի ետևը և անհետանում:

Եվրոպացին վերադառնում է իր բնակարանը:

Նորից է լսվում սուլոց և այս անգամ՝ դա ձուլարանի շչակն է: Շչակը լռում է, բայց նրա ձայնը դեռ որքա՜ն հեռու է տարածվում, որքա՜ն երկար ու խոր: Բանվորները գնում են ձուլարան, և սկսվում է աշխատանքային օրը:

2

Ծառերն են: Ծառերի տակ՝ հողն է: Հողի տակ՝ մարդիկ են:

Հողի հետ խառը կա մի մետաղ, որը ձուլելուց հետո դառնում է դեղին, ինչպես արևը: Դա պղինձն է: Իջել են բանվորները գետնի տակ, պղնձի մոտ, և քանդում են:

Մուրճերը երգում են նրանց ձեռքերում և փորում են: Ահա մեկը պառկել է մեջքի վրա և քանդում է պղնձախառն առաստաղը:

Իսկ մուրճը երգում է:

— Ես,— ասում է մուրճը,— ահա քանդում եմ, և պղինձն ուրախ է դրա համար: Ես քանդում եմ պղինձը և կույտեր եմ անում: Կգա ստորերկրյա վագոնը և կտանի հանքը: Իսկ այնտեղ, քաղաքներից մեկի փողոցներից մեկում կբարձրանա մի շենք:

Դա պղինձն է:

Պղնձի պես պղնձագույն են արևից կիզված լանջերն ու դաշտերը մեր երկրի որքա՜ն և որքա՜ն վայրերում: Պղնձագույնը կանհետանա այդ տեղերից, և լանջերն ու դաշտերը կանաչ կհագնեն:

Դա պղինձն է:

Մարդիկ են: Մարդկանց վերևում՝ հողն է: Հողի վրա՝ ծառերն են:

Ծառերի մեջ վաղը մի նոր գործարան կկանգնի և նոր շենքեր կկանգնեն: Հիմա կանաչագույն են այդ վայրերը, բայց վաղը դրանք պղնձագույն կդառնան, կդառնան մեծածավալ քաղաք:

Դա էլ է պղինձը:

Մուրճերը երգում են, նրանք գտնվում են մկանոտ ձեռքերում: Դա նշանակում է, որ մուրճերը դադար չեն առնի: Եթե դադար առնեն՝ պղինձ չի լինի, և երգը կլռի: Բայց դադար չեն առնի:

Մուրճերն իրենք իրենց չեն երգում: Երգը հոսում է ուղեղից, սրտից, նա հոսում է արյան երակներով, նա մկանների միջով հասնում է մուրճին: Հասնում և զրնգում է նրա մետաղի մեջ:

Այսպես է լինում, որ երգում են մուրճերը:

3

Ներքևում պղնձաձուլարանն է: Այնտեղ է գտվում պղինձը և դառնում մաքուր դեղին: Եվ այնտեղ է, որ պղնձի միջից զատում են փոքրաքանակ ցինկը, անագը, կապարը, արծաթը, ոսկին:

Եվրոպացին աշխատում է այնտեղ: Որտեղացի՞ է նա կամ ի՞նչ ազգից՝ ոչ ոք չգիտե: Ի՞նչ է նրա անունը՝ ոչ ոքի հայտնի չէ: Համենայն դեպս իր բանվոր ընկերների մեջ նա հայտնի է որպես Եվրոպացի: Դա նրա և անունն է, և ազգությունը:

Մի օր նա եկավ Ալավերդի և դարձավ պղնձաձուլարանի վարպետ: Եվ նույն օրվանից նա դարձավ բանվորների սիրելին: Բանվորները, լսելով նրա Եվրոպայից եկած լինելը, նրան մկրտեցին Եվրոպացի անունով, և նա այդպես էլ մնաց:

Ահա նա աշխատում է, և նրա քառասուն տարեկան դեմքը պղնձագույն է: Հնոցի կրակի՞ց է դա այդպես, թե՞ բնականից՝ չգիտես: Նույնիսկ չգիտես, հալվող պղի՞նձն է իր գույնն արտացոլել նրա դեմքի վրա, թե՞ դեմքը՝ հալվող պղնձի:

— Եվրոպացի, դու լավ վարպետ ես,— ասում է մի բանվոր,— էլ որտե՞ղ ես աշխատել դու:

— Էլ որտե՞ղ չեմ աշխատել ես,— պատասխանում է Եվրոպացին:— Եվ, գիտեք, շատ եմ աշխատել ես: Արդեն քսանվեց տարի:

— Դու ինչո՞ւ եկար մեզ մոտ, Եվրոպացի:

Նա չի ուզում պատասխանել: «Եկա, էլի»,— քրթմնջում է քթի տակ, ապա ավելացնում բարձրաձայն.

— Կպատմեմ մի օր. . .

— Հիմա պատմիր, Էլի:

— Ի՞նչը: Դե, այսպես էր. քսանվեց տարի աշխատեցի: Քսանվեցերորդ տարին նույնքան վատ էր, որքան որ առաջինը: Կին, երկու երեխա. . . Մենք գործադուլ արեցինք:

Նա լռում է՝ մտքերի մեջ սուզված:

— Հետո՞, Եվրոպացի:

— Բանտից որ դուրս ելա, գնում եմ՝ ասացի: Ասացի՝ գնում եմ իմ հայրենիքը՝ բանվորներինը: Քեզ փող կուղարկեմ՝ ասացի կնոջս: Իսկ հետո կտեսնենք, կամ դու կգաս ինձ մոտ, կամ ես՝ քո: Նա լուցկու գործարանում է աշխատում: Նրա գործը ֆոսֆորի հետ է: Գիտե՞ք, թունավոր է դա:

Նորից է հարցնում բանվորը.

— Քաղաքը մե՞ծ էր: Գործարանը...

Եվրոպացին նայում է նրան և լուռ հասկացնում, որ մեծ, շատ մեծ էր քաղաքը, նաև գործարանը:

Լռում են:

Մի ուրիշ անգամ մի ուրիշը հարցնում է.

— Չե՞ս ձանձրանում մեր փոքրիկ ավանում, Եվրոպացի:

Եվրոպացին նայում է նրան և լուռ հասկացնում, թե դու դեռ շատ երիտասարդ ես և քիչ բան գիտես:

— Ինչո՞ւ պիտի ձանձրանամ,— շարունակում է նա բարձրաձայն:

— Ո՞վ գիտե: Փոքր ավան, մի ծխնելույզ, ձորը. . . Իսկ այնտեղ. . .

— Սա մեր հայրենիքն է և մեր գործարանը, երիտասարդ: Ուրեմն՝ կընդարձակենք ավանն էլ, գործարանն էլ: Իսկ այնտեղ մենք զանազան տեսակի գործադուլներ էինք անում: Նաև՝ իտալական: Գիտե՞ք ինչ բան է դա: Այ, այսպես. դու, ասենք թե, այս պղնձի վրա գրում ես երրորդ տեսակ: Իսկ սա երկրորդ տեսակ է: Տուժում է գործարանատերը. . . Կամ թե չէ՝ օրական մի հալոցք ես լցնում: Դու լսո՞ւմ ես՝ միայն մի հալոցք: Դա ծիծաղելի է, չէ՞: Բայց գործարանատերը, իհարկե, չի ծիծաղի:

Լռում է Եվրոպացին և մի քիչ հետո ավելացնում է.

— Այսպիսի բաներ:

4

Ձորում վերջալույս է: Արևն այնքա՜ն շուտ է թեքվում սարերից այն կողմ: Երկնքում դեռ նրա շողերն են, իսկ ներքևում արդեն մոխրագույն խավարն է: Ծառերի տակ մութն է, և չղջիկներն իրենց թևերն են թափահարում: Իսկ փայտփորիկը դեռ փորում է…

Թեև դեռ լիակատար մթություն չէ, բայց էլեկտրական լապտերներն արդեն վառվում են գործարանի մոտերքում: Բանվորները նստել են իրենց շենքերի մոտ կամ գետի ափին, ծխում են և զրուցում:

Եվրոպացին նստել է մի ծառի տակ, նայում է ձորի երկայնքով, իր եվրոպական չիբուխն է ծխում և մտածում է:

— Այ,— մտածում է նա,— ձորը խավար հագավ: Ծառերն իրար եկան, մոտեցան, մոտեցան ու դարձան մի անբաժանելի մուգ կանաչ զանգված…

Սա՝ ձորն է և սա՝ ձորի ոլորապտույտը: Դրանից այն կողմ նորից ձորն է և այդպես դեռ երկար: Այստեղ մի քիչ էլեկտրական լույս կա, այնուհետև լույս չկա և այդպես դեռ երկար:

Նայում եմ և թվում է, թե ծառերի վրա լամպեր կան կախված և հանկարծ էլեկտրական լույսը պիտի փայլի ամեն տեղ: Ձորը պիտի լուսավորվի. . .

Գետնի տակ փորում են: Հիմա, երբ երեկո է, հիմա էլ են փորում: Անընդհատ պղինձ են հանում և հանում են: Պղինձը՝ պղինձ կծնի և գործարանը՝ գործարան: Այդպես կլինի. . .

Կրակեցին գործադուլավորների վրա: Պաուլն սպանվեց: Ալբերտն ու Շացկոն վիրավորվեցին: Հիստերիկ ճչում էր Ալիսան: Ինչե՜ր կատարվեցին… Ծեծեցին, ձերբակալեցին, բայց նրանք երգում էին՝ «Ելիր, ում կյանքը անիծել է»: Կյանքը մեզ էր անիծել, և ելանք մենք՝ ստրուկների ու սովյալների աշխարհը: Բայց մեզ վրա կրակեցին…

— Դու փախչո՞ւմ ես,— հարցրեց Յոհանը: Ես չէի փախչում:— Ոչ,— ասացի,— հայրենիք եմ գնում, Խորհրդային երկիրը: Բայց ես կգամ: Եվ ինչպե՞ս կգամ. . . Այստեղ նրանք ինձ կարող են բռնել նորից, կախել: «Գործադուլի կազմակերպիչը»՝ արդեն իմացել են նրանք: Ինչպե՞ս մնալ: Եվ հետո, մերոնք շատ են ուզում իմանալ խորհուրդների երկրի մասին: Ի՞նչ է տեղի ունենում այնտեղ: Կվերադառնամ, կպատմեմ: Եվ կվերադառնամ պատրաստված: Կսովորեմ, թե ինչպես անել, որ մերոնք միահամուռ ընթանան և գործադուլը չվիժի…

Ես փախե՞լ եմ: Ես չեմ փախել: Ճիշտ է, այստեղ այնքա՜ն լավ է, այնքա՜ն հարազատ, որ չեմ ուզում վերադառնալ: Ես մտածում եմ՝ կաց, բայց ասում եմ՝ գնա, դու այնտեղ շատ գործ ունես անելու: Եկա, տեսա, սիրեցի, սովորեցի: Ինչ գնով էլ լինի, մեզ մոտ էլ պետք է դարձնել այսպես: Անպայման…

5

Եվրոպացու գալու առաջին օրերին բանվորներին մի բան շատ զարմացրեց: Այդ այն էր, որ Եվրոպացին ձուլարանում իրեն զգում էր ինչպես իր հին տանը: Դա ոչ միայն բանվորի հարազատության զգացմունքն էր իր հարազատ միջավայրի հանդեպ, դա ավելին էր: Նա պարզապես ծանոթ էր ամեն ինչին:

Նա նայում էր շենքերից մեկին և ասում.

— Կարծեմ տասներկու թվի՞ն է շինված:

— Ճիշտ է...

Իսկ տարեթիվը չէր գրված ոչ մի տեղ.. .

Հարցնում էր.

— Համար երկու հանքահորը հիմա աշխատեցնո՞ւմ եք:

— Ոչ: Պղինձն այնտեղ վերջացավ:

— Դե իհարկե, փոքր հանքահոր էր: Իսկ այն նոր շերտը ե՞րբ բացեցիք:

— Քսանհինգ թվին:

Եվրոպացին թևերը կանթում էր մեջքին, նայում էր շուրջը և նորից հարցնում.

— Ճեղքված կաթսան ո՞ր թվին փոխեցիք:

— Շատ վաղուց: Մեր այստեղ աշխատելուց առաջ: Մեզ այդ մասին հին բանվորներն են պատմել.. . Իսկ դու որտեղի՞ց գիտես, վարպետ: Դու այնպես ես խոսում, կարծես ինքդ շինած լինես այս գործարանը:

Եվրոպացին փակում էր մի աչքը, ապա մյուսը և ծիծաղում.

— Համարյա թե ես եմ շինել, ի՞նչ կա որ:

Եվ նորից էր ծիծաղում:

Բանվորները չէին հասկանում և, իհարկե, չէին էլ հավատում:

Իսկ քիչ հետո նա նորից.

— Ֆրանսիացիներին ե՞րբ խռիկ տվեցիք:

Մեկն ուզում էր պատասխանել, բայց զարմացած միջամտում էր մի շատ երիտասարդ, նորեկ բանվոր.

— Ի՞նչ ֆրանսիացի...

— Չգիտե՞ս,— ասում էր Եվրոպացին:— Այս մեր հանքերն ու ձուլարանն առաջ պատկանում էին մի ֆրանսիական ընկերության: Շատ հանեցին պղինձ, արծաթ, ոսկի. . .

Բանվորները լուռ էին:

— Հայրիկ,— հարցնում էր Սառան,— դու այդ բոլորը որտեղի՞ց գիտես:

— Ես շատ բան գիտեմ, աղջիկս,— ժպտում էր Եվրոպացին:— Այն էլ գիտեմ, որ համար յոթ հանքից մի քիչ դեպի հարավ.. . Բայց այդ մասին ես հետո կպատմեմ, ինժեներին.. .

Բանվորները հետաքրքրվում էին ծայրաստիճան.

— Ի՞նչ, ի՞նչ.. .

Եվրոպացին գլուխը մոտեցնում էր նրանց և բարեկամաբար շշնջում.

— Պղինձ կա: Շատ:

Երկու օր հետո հաստատվում էր նրա ենթադրությունը: Բանվորները զարմացած էին:

— Դու մի գաղտնիք ունես, Եվրոպացի, բայց չես ասում մեզ:

— Ի՜հ,— թափահարեց ձեռքը Եվրոպացին մի անգամ և ծիծաղեց:— Ի՞նչ գաղտնիք, հասարակ բան: Ես այստեղ աշխատել եմ տասնվեց տարի առաջ՝ ֆրանսիական ընկերության ժամանակ: Երկրում դեռ վարպետներ չկային, իսկ ֆրանսիացիները պատրաստել չէին ուզում, դրսից էին բերում: Ինձ էլ բերեցին: Պա՞րզ է...

Բանվորները ծիծաղեցին լուծված գաղտնիքի համար և նրանցից մի քանիսն իսկույն վազ տվեցին ինչ-որ տեղ: Նրանք վերադարձան տեղացի մի քանի վարպետների հետ, որոնք, նույնպես, ժամանակին աշխատել էին ֆրանսիական ընկերության մոտ, իսկ այժմ թոշակառուներ էին կամ աշխատում էին ձուլարանի այլ ցեխերում և դեռ չէին տեսել Եվրոպացուն: Բայց որքան էլ ուշադիր նայեցին նրանք Եվրոպացուն՝ ձեռքերն աչքերին հովանի անելով, ճանաչել չկարողացան:

— Իսկ ես ձեզ ճանաչում եմ,— ժպտաց Եվրոպացին և անվանեց համարյա բոլոր վարպետներին՝ անուն-ազգանունով:— Այ, օրինակ, դու ինձ մոտ ես սովորել.. .

— Սուտ է,— բացականչեց տեղացի վարպետը:— Ես սովորել եմ ֆրանսիացիների բերած մի շատ գեղեցիկ և առույգ երիտասարդի մոտ, որը մի տարի աշխատեց մեզ մոտ և վերադարձավ: Իսկ դու...

— Իսկ ես հենց այն երիտասարդն եմ,— հառաչեց Եվրոպացին:

Վարպետները սարսափով նայեցին նրա նիհար ու տանջված կերպարանքին և այս անգամ ճանաչեցին իրենց վաղեմի երիտասարդ վարպետին, իրենց վաղեմի բարեկամին.

— Իսկ հա՞նքը.. .— հետաքրքրվեց մի աղջիկ:

— Այդ հանքը հետազոտել էին շատ վաղուց, համար յոթ հանքահորից այն կողմ: Պատերազմն սկսվեց, և այդպես էլ մնաց. չշահագործեցին: Իսկ ես գիտեի տեղը.. .

6

Կիրակի օրը Եվրոպացին ուսեց որսորդական հրացանը:

— Գնում եմ որսի:

— Մենա՞կ:

— Մենակ:

Եվ բարձրացավ սարը: Նա որս անել վաղուց գիտե: Բայց այս անգամ նա որս չարեց: Մտավ անտառ, խորացավ դրա մեջ, հրացանը նետեց մի կողմ և նստեց:

Մտածելու շատ բան ունի Եվրոպացին: Նա այսօր նամակ ստացավ տնից: Ֆոսֆորը, իհարկե, վտանգավոր նյութ է, թունավոր: Իսկ ի՞նչ եղան երեխաները, ի՞նչ պիտի անեն այսուհետև առանց մոր.. .

Մեկը նրանցից նույնպես աշխատում է լուցկու գործարանում՝ փոքրիկ Էմման: Երբ նա մեծանա և դառնա իր մոր չափ, նրա դեմքն էլ կլինի գունատ և նրա մատներն էլ կլինեն լուցկու նման բարա՛կ, բարակ.. .

Իսկ Էմիլը դարձել է «նկուղների մարդ», որին վաղ թե ուշ կարող են կախել կողոպուտի կամ սպանության համար:

Եվրոպացին հառաչեց: Նա նորից պետք է թողնի իր հայրենիքը և մեկնի այնտեղ, որտեղ ծնվել է: Էմման ու Էմիլն այնտեղ են, այնտեղ է ստրուկների և սովյալների աշխարհը.. . Մի օր այնտեղ մեծ քաղաքի փողոցները կլցվեն վառոդի հոտով, կլինի հրացանաձգություն, կլինի մեծ հեղափոխություն, որից հետո ամեն ինչ կդառնա այսպես:

Նա կբռնի կարմիր դրոշը և կասի՝ սա է մեր վերջին կռիվը.. . Սա վերջին կռիվն է, վերջինը, վերջինը.. .

Եվ հաղթականը.. .

Միահամուռ կգնան, զինված, ոխերիմ, միահամուռ կգնան պալատների վրա.. .

Եվրոպացու աչքերի մեջ կրակներ վառվեցին: Նա վեր ցատկեց տեղից, ուսեց հրացանն ու արագ քայլեց: Ապա լսվեց նրա ձայնը: Նա երգում էր: Երգում էր հաղթ, ուժեղ:

— Մեր սեփական փորձված ձեռքով: Մեր, մեր ձեռքով: Կինս, սիրելիս, դու այլևս չկաս, բայց նորից քեզ եմ դիմում ես հիմա: Մենք հին աշխարհը կքանդենք մինչև հիմքերը և քո փոքրիկ Էմման, և քո փոքրիկ Էմիլը կլինեն երջանիկ.. .

Ավանում լսվեց Եվրոպացու երգի ձայնը: Բանվորները ժպտացին: Որս անողը չի երգի: Կփախչի որսը:

Բայց բանվորներից մեկը նշանակալից նայեց մյուսներին և ասաց.

— Վարպետը մեծ վիշտ ունի, երևում է: Ո՞վ գիտե ինչե՞ր է տեսել նա այն աշխարհում.. .

Իսկ բարձրից, անտառից, դեռ լսվում էր.

— Ուր ոչ ստրուկ կա, ոչ դժգոհ.. .

7

Եվրոպացու մեկնելու օրը:

Երբ նա արթնացավ, դեռ չէր կարելի որոշել՝ լո՞ւյսն էր ավելի շատ՝ մթության մեջ, թե՞ մութը՝ լույսի: Ծառերը խշշում էին գիշերվա մասին, և գետը խշշում էր գիշերվա մասին:

Եվրոպացին կապկապեց իրերը:

Պղնձի մի փոքրիկ, ոսկեգույն կտոր, որ դրված էր լուսամուտում, նա վերցրեց, դրեց պայուսակի մեջ, ելավ դուրս:

— Մեկնո՞ւմ ես, վարպետ:

— Մեկնում եմ:

— Կվերադառնա՞ս նորից:

— Ո՞վ գիտե: Գուցե կվերադառնամ: Գուցե ոչ: Բայց շատ կուզենամ.. .

Երբ նա քայլեց դեպի գետը՝ ամեն ինչ այնքան սովորական թվաց նրան, որ նա չհավատաց իր մեկնելու մտքին: Կանգ առավ և սկսեց սպասել: Մի որպե հետո լսվեց ուժեղ սուլոց և մոտեցավ գնացքը:

Գնացքը կանգ առավ մի պահ և գնաց: Եվրոպացին չմեկնեց: Նա մտածեց՝ «կմեկնեմ ցերեկվա գնացքով»...

Սկսվեց աշխատանքային օրը:

Նա ինչո՞ւ չի աշխատում այսօր: Ինչո՞ւ մյուսներն արդեն այնտեղ են՝ ձուլարանում, իսկ ինքը՝ այստեղ.. .

Նա ցանկություն զգաց մտնել ներս և նույնպես կանգնել իր գործին: Նա նույնիսկ մոտեցավ դռանը: Բայց և իսկույն հեռացավ: Նա դեռ երեկ վերջացրել էր իր բոլոր գործերն այնտեղ.. . Նա դեռ երեկ երեկո հրաժեշտ էր տվել բանվորներին: Նրան մնում էր նստել գնացք ու գնալ: Հեռո՛ւ.. . Շա՛տ հեռու..

Եվրոպացին նորից գնաց կայարան, նորից կանգնեց գետի մոտ և սկսեց սպասել: Նայեց դեպի ձորի խորքը:

Ձորը դուրս կգա դաշտ, ռելսերը կսլանան ավելի և ավելի առաջ և կգնան, կգնան...

Կտանեն իրեն:

— Երկաթը տաք-տաք կռենք,— բարձրացավ հորձանքը և խփվեց Եվրոպացու կրծքին: Նա ձգվեց: Նա վերադառնում է ավելի կոփված, ավելի անհաշտ.. .

Այնքա՜ն լավ էր փայլում ցերեկվա տաք արևը ձորի զով կանաչության մեջ:

Գնացքը եկավ:

8

Ձորում վերջալույս է: Արևն այնքան արագ է թեքվում սարերից այն կողմ: Երկնքի վրա դեռ նրա շողերն են, բայց ներքևում արդեն մոխրագույն խավարն է: Ծառերի տակ մութն է, և չղջիկները թևերն են թափահարում: Իսկ փայտփորիկը դեռ փորում է...

Թեև դեռ լիակատար մթություն չէ, բայց էլեկտրական լապտերներն արդեն վառվում են գործարանի մոտերքում: Բանվորները նստել են շենքերի մոտ, գետի ափին, ծխում են և զրուցում:

— Եվրոպացին գնաց:

— Գնաց:

— Լավ մարդ էր ու լավ վարպետ:

— Ինչո՞ւ գնաց:

— Ասում են՝ կինը մահացել է, իսկ երեխաները մնացել են փողոցում:

— Հեղափոխական մարդ էր. ..

Մութն ավելի խտացավ: Դրսում նստածներն սկսեցին ցրվել, մտնել իրենց բնակարանները: Մնաց պահակը: Նա վառեց ծխախոտը և հսկում է:

Բանվորները հանգստանում են իրենց բնակարաններում: Նրանցից շատերն արդեն քնել են:

Բայց մյուս հերթափոխության բանվորներն աշխատում են: Երբ ականջդ դնես գետնին և լսողությունդ լարես, կլսես հարվածի խուլ ձայներ:

Պղինձ են քանդում:

1928